ՆՈՐ-ԴԱՐ

№ 7 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ 23 Յանուարի **1888** Շաբաթ 23 Յանուարի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 7

Տարեկան 10 րուբլի, վեց ամսոյ՝ 6 րուբլի, երեք ամսոյ՝ 3 ր. 50 կ., ամսոյ՝ 1 ր. 50 կ., հատով՝ 5 կոպէկ: Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատանը բաց է ամէն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւնները ընդունւում են ամէն լեզուներով: Յայտարարութիւնների գումին 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԸ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

ՆԵՐԿԱՅ **1888** ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Հինգերորդ տարի)

Հրատարակւում է նոյն ծրագրով և ծրագրով

Խմբագրութիւնը ստանում է և սեփական հեռագիրներ

Տարեկան գինն է **10** րուբլի, վեց ամսուան՝ **6** րուբլի, հատով՝ **5** կոպ. Եւրոպայի, Թիւրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ:

Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն:

Թիֆլիսում բաժանորդ են գրւում միմիայն «Նոր-Դար»-ի խմբագրատանը:

Խմբագրատանը գտնւում է Գոլովինսկի Պրոսպեկտի վերայ, Թիֆլիսի ժողովարանին (կլուբին) կից՝ Զուբալովի տանը:

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ

Շաբաթ, 23 յունվարի, նշանակւած է

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

ՅՕԳՈՒՏ ՀՐԴԵՀԻՑ ՎՆԱՍՈՒԱԾ ՁԵՅԹՈՒՆՑԻՆԵՐԻՆ,

Մասնակցութեամբ տ. տ. Զաբուգինայի, Զվեագինայի, Իօզիֆովիչի, Լեբեդևսկայի և պպ. Պրեանիշկովի, Լօգիի, Մեգվեգովի, Գ. Օ. Կորգանովի և Իպպոլիտով-Իվանովի, որից յետոյ Թատրոնասէրները (ակիններ և սազանդարներ) Զէյթունցիների հագուստով կ'երգեն Զէյթունցոց երգը:

Երաժշտական երեկոն վերջանալուց յետոյ կը լինի պար:

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ ժողովարանի գանձապահից:

(խմբ.) 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր. Նշմարներ.
Քաղաքական.—Լուրեր.
Խառն—Լուրեր.
«Նոր-Դար»-ի հեռագիրներ.
Առևտրական.
Յայտարարութիւններ.
Ֆէլիէտօն.—Արշակ Սանթուրեան.

ՔՐՈՆԻԿՈՆ

Կ. ՊՈԼՍԻՑ մեզ գրում են.—«Մեր ս. Պատրիարքը, ինչպէս ձեզ յայտնի է, պատճառաբանութեամբ հրաժարւած էր իւր պաշտօնից և քանիցս կրկնած էր թէ՝ անդառնալի է իւր հրաժարականն. Նոր տարւոյն առթիւ ս. Պատրիարքը լռիկ իւր Աթոռը նստաւ վերստին և պիտի պատարագէ Ս. Ծննդեան տօնին: Բ. Դուռը վաւերացրից քաղաքական ժողովը և Պէչիքթաշի գերեզմանատունը լաւութեամբ յանձնուեցաւ ազգութեան, ինչպէս որ անցեալ տարի կամեցել էր անել այդ ս. Պատրիարքը կրօնական ժողովի մի քանի նշանաւոր անդամների համաձայնութեամբ:

Այս առթիւ պիտի յայտնեմք ձեզ, որ մեր ս. Պատրիարքը վաղուց առացել է վեհ. Կաթողիկոսից մի գրութիւն, որով թոյլ է տրւում գերեզմանների տեղափոխումը, որ մինչ սակի է ունեցել հարկաւոր պարագաներում:

Ս. Պատրիարքի վերստին պատրիարքական Աթոռի վերայ բազմելը ցոյց է տալիս ձեզ, թէ, Նրա հրաժարականի պատճառաբանութիւնները միմիայն ձևի համար էին մէջ բերւած, ինչպէս վաղօրօք գրել էի ձեզ, որպէս զի քօղարկուի հրաժարականի բուն շարժառիթը, որ անձնական էր: Դրա համար է, որ այսօր հրաժարականը հանդերձ պատճառաբանութիւններով անհետանում է, և մեր ս. Պատրիարքը շարունակում է իւր պաշտօնը, չսպասելով մինչև անգամ Բ. Դրան կարգադրութեան:

Զարմանքով կարդում եմ ձեր լրագիրների մէջ այն նզովքներից և անէծքներից, որոնք իբրև թէ տեղի են ունեցել այստեղ: Կովկասի մամուլը այստեղի մամուլի վերայ իրեն աւելի բարձր է համարել և մինչ քաղաքակրթութիւնից և եւրոպական լուսաւորութիւնից ճառել. այժմ այդ ինչ յառաջդիմութիւն է, այդ ինչ խաւարի մէջ էք ընկել: Եւ վերջապէս միթէ ներելի է հայ մամուլին, որ նա հայոց եկեղեցու օրէնքների վերաբերութեամբ այդքան անգէտ և անտեղեակ լինի: Միթէ մեր եկեղեցին ինքնիրեն ընդունում է: Եւ եթէ եկեղեցին մի որևէ գործ ուզում է նզովել, միթէ դրա համար չկայ եկեղեցական օրէնք, կարգ, ծէս, որ ճշմարտութեամբ կատարելու պարտաւորւած են եկեղեցական պաշտօնեաները: Կամ զոյց ձեզ համար իւրաքանչիւր պատահական ամբաստանութիւն նզովք է, և մասնաւոր հայհոյանք՝ անէծք: Տեղւոյս յայտնի գիրք ունեցող եկեղեցականներին ես ճանաչում եմ. եկեղեցական կարգերի և աստուածաբանական գիտութիւնների վերաբերութեամբ դրանց ունեցած հմտութեան մասին երաշխաւորել չեմ կարող, բայց դրանց դէմ զրպարտութիւն արած կը լինիմ, եթէ ասեմ, թէ դրանք չգիտեն մեր եկեղեցական օրէնքների տեսակէտից՝ անէծքների և նզովքների նշանակութիւնը և դրանց օրինական ճանապարհով գործադրելու եղանակն ու կարգը:

Ի վերջոյ պիտի ասեմ, որ Ռուսիայի և Կովկասի լրագրերում հրատարակւած շատ—նպաստաւոր թէ աննպաստ—թղթակցութիւններ, որոնք վերաբերւում են տեղւոյս գործերին և գործող անձերին, կարդ են կարդալ միմիայն նրանք, որոնք ծանօթ չեն թրքահայերի գործերի և գործող անձերի հետ:

Եթէ ուզում էք թրքահայերի գործերի և նրանց մէջ գործող անձերի անձնաւորութիւնների հետ ծանօթանալ և ճշմարտութիւնը իմանալ, պէտք է ուղարկէք այստեղ յատուկ թղթակիցներ, որոնք պէտք է օրինաւոր մարդիկ լինեն և կողմնակի ազդեցութիւններին չենթարկուին: Այլապէս, թրքահայերի գործերից տեղեկանալու և գործող անձերի արժանաւորութեան և կատարած գործերի չափը ճանաչելու և գնահատելու համար, ամենալաւ միջոցը տպագրին մամուլի և զանազան ժողովների արձանագրութիւններն են: Դրանցից գոնէ քիչ-շատ կարող էք ստոյգ տեղեկութիւններ քաղել և ճանաչել գործող անձերի անձնական յատկութիւնները:

Այսպէս դուք կիմանաք միայն հրճուանք, չինովի բանիր, կը կարդաք շատ բառեր, մեծանձնին և քաղցրալեզու գործածւածքներ և բեկլամներ:

—

Տեղական ռուս լրագիրներում վերջի ժամանակներս սկսել է մի բանակռիւ, Կովկասում տեղական ինքնավարութիւն մտցնելու վերաբերմամբ:

Մի կողմը հիմնւելով այն հանգամանքի վերայ, որ 20 դար պատմական կեանքը հասունացրել է մեր ժողովրդին, ժառանգաբար տուել է նրան գիտակցութիւն, հասարակականութիւն, մասսայ կարգապահութիւն և այլն և օրինակ բերելով այժմեան Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը և մի քանի այլ փաստեր, որոնք ոչնչով պակաս չեն Ռուսիայի նմանաման հիմնարկութիւններից, ասում է, որ եկել է ժամանակը Կովկասում էլ մտցնելու այն ինքնավարութիւնը, որը մտցրած է Ռուսիայի նահանգներում:

Իսկ միւս կողմը ասում է, թէ՝ 20 դարի պատմութիւնը, որևէ ժողովրդի իրաւունքներ վայելելու հետ կապ չունի. որովհետեւ փառաւոր անցեալ ունեցած շատ ազգեր այժմ կամ բոլորովին անհետացել են և կամ աւելի վատ դրութեան մէջ են քան նրանք, որոնք աշխատում են իրենց ներկան կանոնաւորելու, թէ՝ տեղացիներն, ընդհակառակը, ոչինչով չեն արժանացել տեղական ինքնավարութեան, որովհետեւ ոչ մի որևէ արդիւնաբերութիւն են առաջացրել, ոչ մի նշանաւոր առաջադիմութիւն են արել և այլն:

Որովհետեւ վէճի առարկան (մի կողմ թողնելով, ի հարկէ, բոլոր անձնականութեան վերաբերեալ կողմերը) վերաբերում է մեր երկրի շահերին ամենախոր կերպով, մենք կաշխատենք այդ վիճաբանութեան հետևել և նրա հետ ծանօթացնել մեր ընթերցողներին՝ պատմելով նրանց վիճաբանող ռուս թերթերին կարդալու նպատակներից և ժամանակի կարգաւորից:

—

«Նոր-Դար»-ի բաժանորդագրութիւնը շարունակւում է: Ներկայ 1888 թուականի յունվարից «Նոր-Դար»ը ստանալ ցանկացողները թող շտապեն բաժանորդ գրուելու, ուղարկելով խմբագրութեան իրենց հասցէն:

—

ԲԱԳՈՒԻՑ.—Շաբաթ, յունվ. 16-ին,

ՖԷՅԼԻԵՏՕՆ

ԱՐՇԱԿ ՍԱՆԹՈՒՐԵԱՆ

Ասում էին, որ Արշակ Սանթուրեանը ուսումն աւարտել էր Եւրոպայում, բայց թէ ինչպէս որ երկրում, որ քաղաքում, որ համալսարանում և որ մասնաճիւղը,—այդ ճիշդ յայտնի չէր, և այդ վերջին հանգամանքն էր պատճառը, որ շատերը կասկածում էին, թէ նա մինչև անգամ համալսարանի երեսն էլ չէ տեսել, որ միայն թէ ուսումն աւարտած լինելու ինչ ասել կուզէ, որ Սանթուրեանի պէս մի վերին աստիճանի փառասէր և մեծամիտ երիտասարդը չէր զլանայ փորձելու այդ մասին տարածուելու լուրերը, եթէ միայն կարելի լինէր: Մի բան ճիշդ էր, որ նա հինգ, թէ վեց տարի հեռացած էր քաղաքից, բայց կասկածողների համար այդ դեռ ապացոյց չէր կարող լինել, որ նա այդ բոլոր ժամանակամիջոցն անց էր կացրել համալսարանի նստարանների վերայ... ինչ և իցէ: Ասացինք, որ նա վերին աստիճանի փառասէր և մեծամիտ էր, իսկ փառասէրները և մեծամիտներն առհասարակ լինում են յանդուգն և կամակոր: Եթէ մի և որևէ իցէ բանի մասին նրա հետ վիճաբանելիս՝ նրան ապացուցէիր, որ ինքը սխալւում է և ինքն էլ իւր մէջ համոզւած լինէր, որ, այո, ինչպէս սխալւում է, այնու ամենայնիւ նա յամառութեամբ կը պնդէր իւրը. ոչ մի կերպ նրան չէր կարելի համոզել: Եթէ մի որևէ իցէ անձնաւորութեան մասին ասէիր և ապացուցէիր, որ շատ լաւ մարդ է, ընդհակառակը՝—նա կասէր և կը պնդէր, որ շատ վատ մարդ է: Եթէ ասէիր այս ինչ բանը սպիտակ է, նա կասէր՝ սև է: Եւ այսպէս ամեն բանի մէջ նա հակառակն էր պնդում.—այդ նրա համոզմունքով կոյր հետևողութիւն չէր և նշանակում էր, որ ինքն էլ ունէ իւր սեփական խոր համոզմունքը... Մի որևէ իցէ բանի մասին խօսելիս կամ վիճաբանելիս՝ նա երբէք չէր ասիլ՝ «իմ կարծիքով», այլ անպատճառ՝ «համոզւած եմ»: «Կարծիքն ինչ է,—ասում էր նա,—եթէ մի որևէ իցէ բանի մասին վիճաբանելիս՝ մարդ հաստատ համոզւած չլինի, ինչ իրաւունքով նա կարծիքներով պէտք է խօսի»: Այդ նրա լօգիկան էր: Ընկերների մէջ եղած ժամանակ նա սիրում էր ամեն կողմից բոլորի վերայ իշխել՝ առանց այդ ընդունակութիւնն ունենալու: Ճանապարհին ծանօթին պատահելիս, նա ուզում էր լինէր նա, երբէք առաջինը ինքը չէր գլուխ տալ նրան. այդ իւր կոչումն էր համարում և, իւր հասակի մեծութեամբ, բարձր էր պահում իւր եսի պատիւը: Նա քայլում էր չափաւոր և հաստատ քայլերով, և երբէք չէր ցոյց տալիս, թէ մի բան իրեն գրաւում կամ զարմացնում է: Խօսում էր ազատ և խօսակցութեան ժամանակ յաճախ սիրում էր խառնել օտարազգի բառեր, որոնց շատերի միտքը նա ճիշդ չէր հասկանում: Նա գեղեցիկ չէր, սակայն ամեն ջանք գործ էր դնում գեղեցիկ և գրաւիչ երևալու: Յօնքերը միշտ գոյն թաղած և աչքերը կիսախուփ էր պահում, իսկ մազերը սանրում էր իւր ձևով: Իւր կարծիքով, սիրաշահելով իւր համոզմունքով, իբր աւելի խելօք և լըջմիտ էր երևում: Կանանց, մանաւանդ գեղեցիկ կանանց մօտով անցնելիս՝ նա աւելի վեհանձն դէմք էր ընդունում, բայց չէր նայում նրանց երեսին կամ եթէ նայում էր, ցոյց էր տալիս, թէ ոչինչ ուշ չէ դարձնում նրանց վերայ և մինչև անգամ արհամարհում է նրանց, այն ինչ նրա միտքն ամբողջապէս նրանց կողմն էր լինում և միշտ երևակայում էր, որ նրանց աչքերն իրեն են նայում, միմիայն իրեն: Մեր պարբերական հրատարակութիւններից նա ոչ մէկի ուղղութեամբ չէր համակրում. մէկը, նրա համոզմունքով, «չափազանց կարմիր կարած» էր, միւսը՝ «չափազանց զզւելի», երրորդը «անգոյն թերթ» էր, իսկ չորրորդին ուղղակի ատում էր, և ատում էր նրա համար, որ մի անգամ ինչ-որ յօդուած էր ուղարկել նրան տպելու և մի ամսից յետոյ մի լաւօնական «անպատիւ» պատասխան էր ստացել. «Զամբիւղը գցեցինք»: Իսկ գրքերի վերաբերութեամբ նա շատ խիստ էր. սկսած մեր գրականութեան ծաղկելուց մինչև վերջին ժամանակներս նա մեր մէջ ոչ մի «բան» բան նշանաւորութեամբ» գրող չէր ընդունում. սկսած ամենատաղանդաւոր բանաստեղծ, վիպասան և թատերագիր համարուածներից մինչև լրագրի գաւառական վերջին թղթակիցը, առանց բացառութեան, բոլորին էլ «մրոտող» էր անւանում, չնայելով որ—ասենք փաստաբերում—ոչ մէկի գրուածքը չէր կարդացել: «Գրող» անուանում էր միայն եւրոպական հանճարներին և այն էլ նրա համար, որովհետեւ նրանց գրուածների մասին ուրիշներից շատ գովեստներ էր լսել. բայց նրանց մասին խօսելիս՝ անունները շատ անգամ շփոթում էր՝ մէկի գրուածքը յատկացնելով միւսին կամ մէկին պատկանեցնելով այն ազգութեանը, որին նա չէր պատկանում. օրինակ՝ Շէքսպիրի «Վենետիկի վաճառականը» յատկացնում էր Շիլլերին, իսկ Շիլլերի «Աւազակները» Շէքսպիրին. Վալտէր-Սկոտտին ֆրանսիացի էր համարում, Բայրոնին՝ անգլիացի, իսկ Միլտոնին նա միշտ իտալացի էր կարծում, չնայելով, որ նրան մի քանի անգամ ասել էին, թէ դա անգլիացի է: Մեր մատենագիրներից նա ծանօթ էր միայն Մով-

Թաղիեվի թատրոնում կայացաւ պ. Կարա-Մուրզայի, այս տարուայ սեզոնի առաջին կօնցերտը։ Բաւական հասարակութիւն կար, խումբը բաղկացած էր 45 հոգուց՝ բաժանուած չորս ձայների։ Երգուեցան թւով 12 երգեր, որոնց մեծ մասը բոլորովին նոր էին և այնքան լաւ կատարուեցան, որ հասարակութեան մէջ սաստիկ ոգևորութիւն զարթեցրին. հասարակութիւնը անդադար ծափահարում էր և այս ու այն երգի կրկնութիւն էր պահանջում։ Եւ ճշմարիտ, մարդս տեսնելով մի այդպիսի կատարելագործուած խումբ և լսելով հիանալի հայկական երգեցողութեան ձայնը, զարմանում է, թէ ինչպէս է կարողանում պ. Կարա-Մուրզան կարճ ժամանակամիջոցում պատրաստել այդ բոլորը։

—

Այսօր, յունվարի 23 ին, Թիֆլիսի ժողովարանում կայանալու է, Թիֆլիսում եղող նշանաւոր ոյժերի մասնակցութեամբ, մի կօնցէրտ՝ յօգուտ Զէյթունի հրկիզեալներին. պէտք է երգեն և զէյթունցիների չարերով [?]. որից յետոյ պար է լինելու։ Մենք յոյս ունինք, որ հասարակութիւնը ներկայ կը լինի երեկոյին և կարող կը լինի լիովին բաւականութիւն ստանալ՝ օգտակարը միացնելով զուարճալիի հետ։ Տոմսակները կարելի է ստանալ ժողովարանում։

—

ՄԵՐՎԻՑ.—Մինչև այժմ Մերւն օր օրի վերայ մեծանալով և բազմամարդ դառնալով, շէնքեր կառուցանելն էլ կարևոր էր եղել, այնպէս որ, մօտաւորապէս տների և խանութների թիւն հասնում էր 1000-ի և գուցէ աւելի էլ, որոնց վերայ ծախսուած են նրանց տէրերի վերջի կոպէկներն։ Եւ ճշմարիտ, այն միջոցին կենդանութիւն, շարժում կար. բայց այժմ երկաթուղին առաջ տանելով բոլորն էլ գնացել են, ինչպէս և զօրքերն, որոնք նոյն ձևով առաջ անցան և քաղաքում լռութիւն տիրեց։ Առևտուրն ընկաւ և սկըսան հիւրանոցների իրեղէններն աճուրդով ծախել։ Գործերն ընկնելով, առևտրականներն էլ սկսան քաշուել ուրիշ կայարաններ՝—Չարջույ և այլպէսով էլ խանութների վարձերն էլ ընկան. այն շէնքը, որ 600 ր. էր բերում, այժմ 200 րուբլիով են տալիս։ Եթէ մի փոքր յոյս կայ, այն էլ առաջանում է այն լուրից, թէ մտադրութիւն կայ Անդրկասպեան երկաթուղու գլխաւոր արհեստանոցը փոխադրել Մերվ։ Սակայն այդ մասին ոչինչ հաստատ բան չկայ։ Երկաթուղիներ շինող՝ գեներալ Աննենկօվի կարծիքով, աւելի յարմար է արհեստանոցը Դզլ-Արվաթից փոխադրել Չարջույ, իսկ գլխաւոր կառավարիչը (պատրաստի երկաթուղին ընդունող) Բառօվը աւելի յարմար է համարում ընտրել մի կեդրոն տեղ՝ որպիսին Մերվն է։ Սակայն, կարծիքների տարաձայնութեան պատճառով, ոչ մի եզրակացութեան չեն հանգել և ուրիշ կարևոր գործեր քննելու համար մինիստրութեան կողմից ուղարկուած է առանձին յանձնախումբ։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ.—Այստեղ եղանակը չափազանց ցրտային է։ Ցուրտը R. ջերմաչափով 29.° է հասնում։ Առևտուրը շատ պակաս է։ Գողութիւններ շատացել են։ Ամեն օր տներն են մտնում և կողոպտում։ Հարկաւոր էր ուշադրութիւն դարձնել փողոցների պահապանների արթնութեան վերայ։

Քաղաքիս նորընտիր զինուորներից մի քանիսը ժամանակաւոր արձակուրդ ստանալով եկած էին իրենց տները տօների պատճառով։

Բաղաքիս մէջ անասունների և արբեցողների թիւը օր աւուր շատանում է, գինետների թիւը համարեա կրկնապատկուել է։

—

Շնորհակալութեամբ հեղինակից ստացանք «Արևելեան եղանակներ» վերնագրով եւրոպական նօտաների մի տետրը դաշնամուրի համար, հեղինակութիւն Ա. Բաղդասարեանի։ Տպուած է Մոսկվայում, Ս. Ն. Քրիստեանի՞հրատարակութեամբ։ Տետրի մէջ կան մի քանի եղանակներ. այսպէս օրինակ, «մարչ», «Հայկական եղանակ», «Բաշիբուզուկի եղանակ», «Յարձակումն», «Հայկական եղանակ», «Թիֆլիսի զուռնան», «Վրացական եղանակ», «Նախիջևանի ջրկիրների եղանակ», «Պարսկական եղանակ», «Մօլդաւական պար»։ Գինն է 1 րուբլի։

—

Մայրաքաղաքի թերթերի ասելով, ակադեմիկ Մ. Ա. Զիչին վերջացրել է մի շարք նկարներ ս. Նունէի կեանքից վերցրած։ Այդ պատկերները նշանակուած են Կովկասում նրա գերեզմանի վերայ։

—

Ստացանք «Revue commercial et industrielle du Caucase» կիսամսեայ թերթի 8-րդ համարը, որի մէջ ի միջի այլոց կայ և «Желѣзныя дороги на Сѣверномъ Кавказѣ» վերնագրով յօդուածը։

ՆՇՄԱՐՆԵՐ

Գրականական-հասարակական կեանքի սահմաններից։

I

Նշմարներիս սկզբում ընթերցողներից պարտաւոր ենք ներողութիւն խնդրելու, որ մեր արձանագրութիւններից մի երկու նմուշ տալով՝ լսեցինք։ Ճշմարիտ է, որ այսքան ժամանակում թէ մեր և թէ ռուս գրականական-հասարակական կեանքում այնքան նշանաւոր իրողութիւններ կատարուած են, որ բոլորովին արժէին արձանագրութեան։ Ռուս գրականական աշխարհի մէջ՝ Գլէբ Ուսպէնսկու գրականական-հրապարակախօսական արդիւնաւոր գործնէութեան քսանուհինգ ամեակի տօնախմբութիւնը ինքն ըստ ինքեան մի նշանաւոր իրողութիւն էր, որ մեզ առիթ տար ծանօթացնել մեր հասարակութեանը այդ համակրելի գրողի հետ, որի գործերից, եթէ չենք սխալվում, ամենևին մեր մամուլի մէջ չէ երևացել։ Հենց Գ. Ուսպէնսկու յոբելեանի մօտ օրերին նա ռուս գրականութեան մի գեղեցիկ և վերին աստիճանի հետաքրքիր յօդուած էր նուիրել «Рус. Мысль» ամսագրի անցեալ 1887 թ. IX տետրում հասարակ «Трудовая жизнь и Труженичество» վերնագրով։ Այդ գրականական հասարակական դիտողութիւնների մէջ Գ. Ուսպէնսկին խորհրդածութեան էր ենթարկել Տիմօշչէնկօվի «Борьба съ Хищничествомъ» *) վէպը, որ իւր հետաքրքիր բովանդակութեամբ, մանաւանդ յարաբերութեան ձևով ռուս հասարակութեան և մամուլի ուշադրութիւնը գրաւել էր։

Մեծ ցանկութիւն ունէինք մեր նշմարների համար ծաղկաքաղ անել այս յօդուածից, որով մեր ընթերցողը մի կողմից կը ծանօթանար Տիմօշչէնկօվի վէպի, միւս կողմից Գ. Ուսպէնսկու մտքերի ուղղութեան, համոզմունքների, աշխարհահայեցողութեան, մտածելու և գրելու եղանակի հետ։ Բացի սրանից մի երրորդ պատճառ էլ ունէինք մեր ցանկութեան։ Րաֆֆի «Կայծերի» երկրորդ հատորը շատ ու շատ կողմից մեզ յիշեցնում էր Տիմօշչէնկօվի «Борьба съ Хищничествомъ» վէպը։ Ուրեմն խօսելով Б. съ X. վէպի վերայ բնական պատճառ կունենայինք և «Կայծեր»ի Բ. հատորի վերայ խօսելու։ Տարաբաղդաբար տպարանական և ծառայական պարտականութիւնները մեր ցանկութիւնը ցանկութիւն մնալու դատապարտեցին և զրկեցին մեզ մեր ընթերցողների հետ մի վերին աստիճանի համակրելի և մտապարար հեղինակի վերայ խօսելու բաւականութիւնից։ Ուսպէնսկին իւր գրուածներով այսօր ռուս-գրականութեան մէջ եզակի երևոյթ է և Շչէդրինի ու կոմս Լ. Տօլստօյի հետ Ռուսիայի մտաւոր դասակարգի ամենասիրելի վիպասան-հրապարակախօսն է։

Եթէ այս մասին չաջողեց մեզ խօսել, գոնէ ես կարող եմ «Նոր-Դար»-ի ընթերցողներին ցոյց տալ «Недѣля» շաբաթաթերթի անցեալ տարուայ վերջին № № մէջ «Г. И. Успенскій, Критическій очеркъ» վերնագրով մի շարք յօդուածները, որոնք կարող են բարեխիղճ առաջնորդ լինել Գ. Ի. Ուսպէնսկու մատենագրութիւնների վերայ գաղափար ունենալ կամեցողի համար։ Նրա մատենագրութիւնները այսօր հօթն ստուար հատորներ են կազմում և առանձին հրատարակութիւն ունին։

Ի դէպ է յիշել, որ եթէ մեր ուսումնասէր երիտասարդութեան մէջ գտնուի մէկը և յօժարութիւն ունենայ թարգմանել Գ. Ի. Ուսպէնսկու գրուածներից ամենանշանաւորը՝ — «Власть Земли», մեծ ծառայութիւն արած կը լինի մեր գրականութեան։ Այս գրուածը մեր կարծիքով անհրաժեշտ հարկաւոր է մտաւորութեամբ կարդալ, երբ մենք տրամադրութիւն ունինք ժողովրդի կեանքը և կենցաղավարութեան պայմանները ուսումնասիրելու։ Փառք Աստուծոյ, այժմ այս ուղղութեամբ նկատողութիւններ շատ են պատահում մեր մամուլի մէջ. բայց դժբաղդութիւնն այն է, որ ժողովրդի կեանքի և կենցաղավարութեան երևոյթների ծննդական պատճառների վերայ մեր գաղափարները շատ խառնշփոթ են։ Ուսպէնսկու այս գրուածով մենք այդ կեանքի վերայ մտածելու եղանակը կիմանանք *)։

II

Անշուշտ Գլ. Ուսպէնսկու գրականական աշխատութիւններից աւելի մեր իրական կեանքին առաւել մերձաւոր յարաբերութիւն պիտի ունենար, նշանակում է հայ մամուլի առանձին ուշադրութիւնը պիտի գրաւէր մի իրողութիւն, որ թէև վաղուցուայ եղելութիւն է, բայց ռուսաց հասարակական կեանքի նշանաւոր երևոյթներից մինն էր։ Մեր խօսքը երկու տարի առաջ Կիևում գումարուած վիճակաւոր առաջնորդների համագումարման (съѣздъ) մասին է, որի ժողովների արձանագրութիւնները անցեալները միայն պաշտօնապէս հրատարակուեցան «Прав. Вѣст.»-ի մէջ։ Այդ համագումարումը, թէպէտ նոր երևոյթ էր օրթոտոքս եկեղեցու այժմեան դրութեան մէջ, բայց նախնական եկեղեցու կեանքի մէջ, ընդհանուր սովորութիւնն էր՝ առաքելական կանոնով նուիրագործուած։ Առաքեալների սահմանած գրութեան ԼԵ և ԿԹ կանոնները ուղղակի պահանջում են, որ «Երկիցս ՚ի տարւոջ ժողով լիցի եպիսկոպոսաց և քննեսցեն առ միմեանս զհրամանս բարեպաշտութեան և զպատահեալն եկեղեցական ընդդիմաբանութեան լուծցեն, միանգամ ի չորրորդ շաբաթու Պէնտէկոստէիցն և երկրորդ՝ յաշնան»։

Եթէ մենք բոլորովին անծանօթ էլ լինէինք քրիստոնէական եկեղեցու նախնական դարերի վարչական կարգ կանոններին, մանաւանդ անգէտ լինէինք նրա ամրանալու, աճելու և տարածուելու պայմաններին և հանգամանքներին՝ բաւական էր մեզ Կիևի համագումարման արձանագրութիւնները մտաւորութեամբ կարդալ, որպէս զի խելամուտ լինէինք, թէ ինչպիսի ամուր և միևնոյն ժամանակ պարզ սկզբունքների վերայ հաստատել են առաքեալները եկեղեցու վարչութեան կարգերը։ Կիևի ժողովի մէջ տեսնում ենք քննութեան առնուած բազմաթիւ հարցեր և խնդիրներ, որոնք իւրաքանչիւր եկեղեցու մէջ կարող են ծագել և ամենամերձ առնչութիւն ունենալ եկեղեցական կեանքի ամենաբարձր շահերի հետ, բայց երբէք չեն կարող բանաւոր, մանաւանդ յաւտափոյթ վճիռ ստանալ, եթէ հոգևոր վարչութեան պաշտօնեաների յարաբերութիւնը կատարվում են մի-զանով [?], և ոչ անմիջական փոխադարձութեամբ կենդանի խօսքի։

Վիճակային հոգևորականութեան ժողովները *), որոնք մի ժամանակ գումարվում էին օրթոտոքս եկեղեցու մէջ և որոնց մասին ուղղակի պահանջ էր գրել Գիւմրեցին «Ընծայաբերութեանց» երկրորդ տետրակի մէջ՝—գուցէ մեր եկեղեցու ներքին պայծառութեան և վարչական բարեկարգութեան նկատմամբ՝ այնքան օգտաւէտ չլինէին, որ-

*) Այդ վէպը մենք կարդացինք Վօլֆի «Новь»-ի մէջ (1886 №№ 19, 20, 21, 22), որտեղ և առաջին անգամ հրատարակուած էր։ Այժմ լոյս է ընծայուած առանձին հրատարակութեամբ։

*) Գ. Ուսպէնսկու «Власть Земли» գրուածը առաջին անգամ հրատարակուած է «Отеч. Зап.» դադարած ամսագրի 1882 թ. №№-ում և յետոյ ամփոփուած նրա «Пол. Соб. Соч.»-ի VII հատորում։ Հարկ համարեցի այս մասին յիշել. գուցէ կը գտնուի մեր երիտասարդ թարգմանիչներից մէկը, որ մեր խորհրդին լսելու յօժարութիւն ունենայ։

*) Այս ժողովներին վերաբերեալ օրէնսդրութիւնը դուրս է հանուած 1884 թ. Ռուսաց կօնսիստորիաների Պօլօժէնիէ՝ ից։

սէս Խորենացու և Եղիշէի հետ, բայց ոչ նրանց գրուածքների հետ։ Լսել էր և՛ Ագաթանգեղոս անունը, բայց այդ անունը երբէք չէր կարողանում ճիշտ արտասանել։ Նա վարել էր զանազան պաշտօններ, բայց ո՛չ մի պաշտօնի նրա սիրտը չէր կպել, որովհետև ամեն տեղ էլ գործ էին պահանջում և նրա գլխին կանգնած էին լինում «պատրոններ», որոնք իւրաքանչիւր քայլափոխում նրանից համար ու հաշիւ էին պահանջում,—հենց այդ բանն էր, որ նա ատելով ատում էր։ Նա ուզում էր մի այնպիսի պաշտօն—և, ՚ի հարկէ, կլորիկ ռոճիկով,—որտեղ ինքը ոչ ոքից կախում չունենար. բայց որովհետև այդպիսի պաշտօններ այնքան էլ հեշտ չեն ճարվում, մանաւանդ նրապէսների համար, այդ պատճառով նա տարին տասն և երկու ամիս գրեթէ միշտ պարապ էր մնում... Բայց այդ չէր խանգարում նրան զուգուել վերջին մօդայով, շատ անգամ ճաշել «café d' Europe»-ում, յաճախել կլուբը և ամիսը ճիշտ տասն անգամ օպերա, որտեղ, սակայն, նա երբէք չէր ծափահարում, որքան էլ մի որ և է յայտնի պրիմա-դօննա հիանալի կերպով երգէր։ Այդ բոլորին, ՚ի հարկէ, փող էր հարկաւոր. բայց այդ փողը ո՛ր աղբիւրներից էր ծորում։ —Աստուած չէն պահէր նրա հօր օջախը. հայրը դաղում էր, որդին ուտում... բայց չկարծէք, թէ նրա հայրը, Կարապետը, միլիօնատէր կամ հարուստ վաճառական էր.—ո՛չ, նա միջին կարողութեան տէր մի արհեստաւոր էր։ Ամենափոքր ժամանակից սկսած իւր հալալ քրտինքով աշխատած կոպէկները միմեանց վերայ դնելով, նա կազմել էր մի փոքրիկ դրամագլուխ, որով այսպէս, թէ այնպէս՝ կարողանում էր բանեցնել իւր խանութը և կառավարել մի անհագին ընտանիք, դրա հետ հաշուելով և՛ նրանց մօտ յաճախ դուրս ու տուն անող այն անհանգիստ, «լիզուանիկ», «խաբարբզան» և իրար «միս ուտող» արարածները, որոնք կոչվում են «դիդիէզա», «մամիդա», «դէդիդա», «ձալօ» և այլն, և այլն։ Ուստա Կարապետը շատ բարի, խաղաղ բնաւորութեան տէր և պօլիցիայից, ինչպէս ժանտախտից, վախեցող ու փախչող մարդ էր։ Նա ամեն բան կը տար, միայն թէ «զեսէտնիկը» իւր խանութը կամ տուն ոտք չդնէր։ Իւր որդի Արշակին նա սիրում էր իւր «ջուխտ» աչքի լոյսի պէս և նրա համար իւր հոգին էլ չէր խնայիլ, բայց որ Արշակը մի տեղ չէր «ընակալում» և պարապ էր ման գալիս, այդ նրան մի փոքր գլուխ չէր գալիս։ Այնու ամենայնիւ, այդ վերջին հանգամանքը մոռացութեան տալով, ամեն յարմար դէպքում ընկեր ծանօթների մօտ նա իւր կատարեալ միամտութեամբ պարծենում էր իւր «խելօք, յուսում առած և գիտնաւոր» Արշակով։ Արշակին եթէ ոչ աւելի, բայց նոյնչափ սիրում էին և՛ տան միւս անդամները, բացի երկաթագործ փոքր եղբօրից, որ, չնայելով ծխական դպրոցից ուրիշ ոչ մի աւելի բարձր ուսումնարանի երես չէր տեսել, բայց և այնպէս իւր այդքան «ալէտ» անգամը շատ լաւ հասկանում էր, որ իւր աւագ եղբայր Արշակը մի շատ դատարկ և ծոյլ ապայ է, և երբ պատահում էր, որ նա այդ մասին տանը խօսք էր բացում, հայրը, թէպէտ ինքն էլ իւր մէջ նրա հետ ակամայից համաձայն էր լինում, բայց և այնպէս լսեցնել էր տալիս նրան, ասելով, որ նա «ախմախ» է և չէ հասկանում, թէ ինչպիսի «մեծ մարդ» պէտք է դառնայ Արշակը։ «Ախմախ» որդին ստիպուած ծիծաղում էր միայն հօր այդպիսի միամիտ յուսախաբութեան վերայ։ Այն ինչ հօր այդպիսի քաղցր հովանաւորութիւնը հարթում էր Արշակի ճանապարհը, և նա խաղաղ, անվրդով շարունակում էր իւր ձրիակեր կեանքը։ Միակ մարդը, որի առաջ խոնարհվում էր այդ «հպարտ» որդին,—իւր հայրն էր։ Ի՞նչ էր արդեօք այդ.—որդիական բնական հնազանդութիւն, թէ... մի ուրիշ բան, օրինակ՝ հաշուաւոր վարձատրութիւն հայրական քաղցր հովանաւորութեանը,—այդ միայն ինքը գիտէր, բայց այս մէկը ճիշտ էր, որ նա հօրը շատ անգամ ինչ «զարմանալու» պատմութիւններ ասես՝ չէր պատմում. օրինակ՝ նա պատմում էր, որ ո՛չ թէ արևն է պտտվում երկրի շուրջը, այլ ընդհակառակը՝ երկիրն է պտտվում արևի շուրջը. պատմում էր, թէ լուսինն ինչ է, աստղերն ինչ են և պատմում էր, որ նրանց վերայ էլ մարդիկ ու կենդանիներ են ապրում։ Պատմում էր հին և միջին դարերի նշանաւոր մարդկանց կեանքի «քարակտերիստիկական էպիզօդներից», Պատմում էր Եւրոպայի կեանքի մասին, թէ ինչպիսի ժողովուրդներ են ապրում այնտեղ, թէ ինչպիսի սովորութիւններ, օրէնքներ կան այնտեղ, թէ ինչ նշանաւոր գիւտեր են անում այնտեղ և այլն, և այլն... Հա՛, մոռացայ ասելու, որ Հայոց պատմութիւնից էլ «բաներ» էր պատմում, չնայելով, որ հայոց պատմութեան գիրքը նա երբէք ձեռքը չէր առել (այո՛, պատմում էր, և թող ոչ ոք չզարմանայ...). բայց նա պատմում էր գլխաւորապէս երեք բան.—Հայկի «ռոչաղութիւնը», Արայ գեղեցկի «յիմարութիւնը» և Վասակի «անիրաւ դաւաճանութիւնը»։ Վերջապէս նա պատմում էր և այլն, և այլն։ Հայրը այդ պատմութիւնները լսում էր միշտ բերանը բաց և նրա աչօրուայ լամբը փողն արդէն յայտնի էր լինում նրա բոլոր ընկեր-ծանօթներին։

Ժամանակն անցնում էր։ Արշակ Սանթուրեանցի կեանքի ընթացքը մի մազաչափ անգամ չէր փոխվում. առաջ

քան կարող էին վիճակաւոր Առաջնորդների պարբերական ժողովները:

—Դժուար է հաւատալ, որ մեր ծըխական, մանաւանդ գիւղական հոգևորականութիւնը՝ իւր մտաւոր-բարոյական զարգացման ստորին աստիճանով կարողանար ներգործական մասնակցութիւն և գիտակցական չարաբերութիւն ունենալ, եթէ մեզանում էլ կամենային առաքելական կանոնների ԺԹ յօդուածը անսայթաք գործադրուած տեսնել: Այլ է առաջնորդների գործը: Բաւական է, որ այդ ժողովների շնորհիւ մեր արհիները գոնէ փոքր ինչ կազատուին այն արգելքներից, որ մի կողմից ճնշում է ճշմարիտ ազատութիւնը, միւս կողմից լայնարձակ ասպարէզ են տալիս՝ «օրէնք ի ձեռս առաջնորդաց է» խօսքի իմաստը ըստ հաճոյից մեկնելու: Գէթ փոխանակ փոքր ինչ էլ հոգւոյն հանդէս կը դուրս գայ, և կիմացուի վերջապէս՝ թէ ինչ մտքով ասուած է «Օրէնք ի ձեռս առաջնորդաց են».—շնորհաց գործակից լինելու» թէ «իշխանաբար տիրելու համար»:

Այս ուղղութեամբ եթէ մեր խորհրդածութիւնների թևերին ազատութիւն տանք, գուցէ մենք մտա գործենք այնպիսի սահմանների մէջ, որ կանոնական ցանկ ունենալով՝ մի տեսակ ըղձութիւն են պահանջում աշխարհական մարդկանց դատողութեան ժամանակ: Առանց այն էլ նուաստիս ապիրատ և ամբարիշտ որդի կոչեցին նըրանք, որոնք Մայր Աթոռի հօրաղաստ զաւակ լինելը իրենց մենաշնորհութիւն են համարում:

Մենք շատ յարմար առիթ ունէինք այս խնդրի մասին գրել, երբ հասարակաց ուշադրութեան ներկայացնում էինք մեր «Սալահնից Էջմիածին» ուխտաւոր ուղևորութեան տպաւորութիւնները և խոկմունքների նկարագիրը: Հէնց մեր ուղևորութիւնից մի քանի օր առաջ լրագրով լուր էր տարածուած, թէ Միւռոնօրհնեաց օրերին Էջմիածնում ազգային եկեղեցական ժողով է գումարուելու: Այդ լուրը սխալ դուրս եկաւ. բայց չեմ էլ կարող ասել, որ սուտ ու շինծու էր: Ես իմացայ, որ մեր հոգևոր բարձրագոյն վարչութեան մէջ մի այդպիսի գաղափար էր յղացել - Առաքելական դրութեան ԿԹ կանոնի զօրութեամբ, վիճակաւոր առաջնորդների պարբերական համախմբութեամբ՝ կեանք ու կենդանութիւն ներշնչել նուիրապետական չարաբերութեանց արգլի ձեռերին. Մենք եթէ այն ժամանակ այս մասին լռութիւն պահեցինք, այժմ էլ պարտաւոր ենք զգուշանալ, թէև «Прав. Вѣст.»-ի մէջ մեր հրատարակուած արձանագրութիւնների թարգմանելու մասին մեր ցանկութիւնը շատ մեծ էր: Այսպիսի նիւթերի վերայ խօսելու և խորհրդածելու բնական վայրը ի հարկէ՝ «Արարատն» էր: Մեր տարաբաղդութիւնից՝ այդ «Արարատն» էլ կարծես այսպիսի խնդիրների համար ամենևին ականջ չէ ունեցել և մինչև այժմ ներկայացել է մեզ՝ ինչպէս ասում են, «ոչ հալու խունկը, ոչ Թուրքի զաւեկը»: Ի հարկէ չար ունինք, որ նա այսուհետև իւր կոչման վայել գիրք, ուղղութիւն և բովանդակութիւն ստանալով, այս տեսակ խնդիրների մասին կը կանխէ հասարակաց միտքը ուղղութեամբ առաջնորդելու: Ջնջելով այն հեղինակութեան, որով մեզ հաղորդեցին «Արարատ»ի խմբագրութեան վերակազմուելու լուրը, չար ունինք հաստատ, որ այդ մասին յարուցուած ցանկութիւնները կատարուած կը տեսնենք: Այս մասին այժմ աւելի խօսելը կանխաժամ ենք համարում. երբ բաղդ կունենանք վերանորոգեալ և նոր ուժերով խմբագրուած «Արարատ»ի առաջին ամսատետրը ստանալու, այն ժամանակ մենք մեր տպաւորութիւնները կը հաղորդենք մեր ընթերցողներին: Այս մի քանի տողերը կրկնութիւն էին այն համակրութեան, հաճութեան և ուրախութեան, որ «Նոր-Դար»-ը ըզգաց և չտապեց հաղորդել իւր ընթերցողներին Արարատի բարեփոխուելու լուրը: Տարաբաղդաբար այդ համակրութեան մէջ «Նոր-Դար»-ը միայնակ մնաց. մեզ զարմացրեց այն հեղինակութիւնը, որով մեր ազգի բարոյականութեան և առաջադիմութեան օրէնսդիր մամուլը համեմել էր «Արարատ»-ի բարեփոխուելու լուրը: Գոնէ օտարներից էլ պատկառէին. մինչդեռ ռուս մամուլը ուրախութիւն է յայտնում, որ Էջմիածինը իւր կոչման, իւր միջոցներին վայել գիրք է կամենում ընծայել «Արարատ»ին,—մենք՝ մեր սովորութեան համեմատ, այժմէն սկսել ենք դատափետել, հեգնել և ծաղրել մի ձեռնարկութիւն, որ կարելի է դատել միմիայն արդիւնքը տեսնելով: Սակայն պէտք է նկատենք, որ ներկայումս մեր մէջ ամեն բան ենթարկվում է կուսակցական ամենանեղ հայեացքներին. ոչ ոք չէ քաշվում իւր հակառակորդին վնասելու համար ամենայն տեսակ կեղտեր շպրտել նրա կողմը և անուանարկելու համար ջանք չխնայել այն անձերին, որոնք մեր կեանքի մէջ փայլուն աստղեր են: Ազնուութիւնը կարծես բոլորովին բացակայում է մի որոշ խումբ մարդիկների մէջ...

Մենք ապշելով ապշեցանք տեսնել, որ այժմ մեր մէջ կուսակցական ատելութեան թոյն են արծարծում մինչև անգամ նրանք, որոնց պաշտօնն է աղօթել և Տիրոջ անունը կոչել,—Տիրոջ, որ հաւասար կերպով իւր արևի լոյսը և անձրևի կենդանարար ցօղը տարածում է արդարի և մեղաւորի վերայ... Աստուած վերջերնիս բարի անէ:

Դէհ, ընթերցող, վերջացնենք մեր նշմարները. զգում եմ, որ այս անգամ դրանից մի այլանդակ դուրս եկաւ, կարծես՝ դիտաւորութիւն ունէինք ռուս առածի նման, начали за здравье и кончили за упокой: Քաւ լիցի:

Բժ. Արամ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ.—Բեռլինում հրատարակուող գերմանական կիսապաշտօնական «Köl. Zeit.»-ը թերթը գրում է. «Մենք երբէք չենք թաքցրել, որ Գերմանիան էական շահեր չունի Բօլղարիայում և թէ Աւստրիա-Ունգարիայի համար ոչ մի լուրջ պատճառ չկայ լաւ վէճը վառ խաղաղութիւնից գերադասելու: Բայց միևնոյն ժամանակ մենք բազմիցս էլ աւելացրել ենք թէ՝ հենց որ Աւստրիա-Ունգրիան պատերազմի մէջ մտաւ Ռուսիայի հետ, հենց որ պատերազմական փողը հնչեց, մենք չենք սկսիլ քննել, թէ չտա է մեր շահերին վնասում թէ ոչ՝ այդ պատերազմի առիթը, այլ առաջ կը շարժուենք դէպի սահման՝ մեր դաշնակցին օգնելու համար»:

—«Journal des Débats»-ի ասելով, Վիեննայում շարունակում են քաղաքական դրութեան վերայ հաւատես հայեացքով մտիկ տալ: Այդ թերթի թղթակցի ասելով, աւստրիական մինիստրներից մինն ասել է՝ «մենք պատերազմ չենք ունենալ, բայց խաղաղութիւն էլ չենք ունենալ»:

—«Vossische Z.»-ը խօսելով Ռուսիայի արած խաղաղասիրական յայտարարութիւնների մասին, ասում է, որ դրանց գործած ազդեցութեան թուլութիւնը բացատրվում է նրանով, որ առաջին՝ Ռուսիան մտադիր է շատ փոխատուութիւն անելու, որի նպատակն ուրիշ բան կարող չէ լինել, եթէ ոչ պատերազմական պիտոյքները հոգալ, որովհետև 1888 թուի բիւջէն կազմուած է առանց դեֆիցիտի, և երկրորդ՝ ոչ մի նշան չկայ, որից կարելի լինէր եզրակացնել, թէ Ռուսիան քչացնում է իւր պատերազմական պատրաստութիւնները, իսկ գերմանական «Köln. Zeit.»-ը վերջի ժամանակներս խօսում է Ռուսիայի ունեցած մի ինչ-որ մտադրութեան մասին Փոքր-Ասիայում: Այդ լուրերի հաստատութիւն պէտք է համարել Կ. Պօլսից ստացուած լուրերը Էրզրումի ամրացնելու մասին կրկին եղած կարգադրութիւնները Թիւրքիայի կառավարութեան կողմից: Եւ վերջապէս «Kreuz-Zeit.»-ը հաղորդում է, որ Ռուսիան պատրաստութիւններ է տեսնում փոքր-ասիական սահմանների վերայ էլ: Բացի այդ, նոյն թերթը հաղորդում է, որ Կովկասից երկու կորպուս զօրք փոխադրուել է դէպի Աւստրիայի սահմանները: Լրագրի ասելով, Ռուսիային՝ Փոքր-Ասիայի կողմից Կ. Պօլսին մօտենալու կընդդիմանայ Եւրոպան, մանաւանդ Անգլիան, որ 1878-ի կազմած Կիպրոսեան պայմանագրի զօրութեամբ, պարտաւոր է իւր և Բ. Դրան շահերի տեսակէտից պաշտպանել Թիւրքիայի փոքր-ասիական կալուածները Ռուսիայի դէմ: Ասենք, Անգլիան այդ պայմանը յանձնառու է եղել կատարելու այն պայմանով, որ Բ. Դուռը խոստացել է Փոքր-Ասիայում բարեփոխութիւններ մտցնել՝ բայց Բ. Դուռն այդ պայմանը չկատարեց: Բայց այդ հանգամանքը, թերթի խօսքով, հազիւ թէ կարող լինի Անգլիային ստիպել իւր պարտաւորութիւններն չկատարելու:

ԹԻՒՐՔԻԱ.—Արևելեան Ռումէլիայի սահմաններում Թիւրքիայի զօրքերի թիւը աւելացրած է և հասցրած է 60,000 հոգու:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ.—«Kölnische Zeit.»-ը հաստատում է, որ Ռուսիան այժմ ձգտում է իրագործելու իւր արևելեան քաղաքականութեան նպատակները ոչ թէ Բօլղարիայի միջոցով, հապա Սև ծովի կողմից՝ փոքր Ասիայի միջոցով: Գործառնութիւններին առիթ կլինի Թիւրքական պատերազմական տուրքի վճարման ուշանալը և ամենից առաջ Ռուսիան կը տիրապետէ Էրզրումին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Նիւ-Եօրկում փորձեր են արել 100 ճրագի լոյս տուող էլէկտրական լամպարի վերայ՝ նրան խորասուզելով ծովի մէջ. փորձից երևացել է, որ այդ լամպարի լուսով լուսաւորվում են ծովի տակ 46 մետր հեռաւորութեամբ եղող առարկաները:

*** Միացեալ-Նահանգներում անցեալ շաբաթներ ձիւնի խիստ փոթորիկների միջոցին շատ մարդիկ են կորել: Սառնամանիքն այնքան սաստիկ էր, որ աշակերտներն և ուսուցիչները սառչում էին ոմանք ճանապարհին և ոմանք շինութեան մէջ:

*** Անգլիական եախտ-կլուբը Ուէլսի պրինցին՝ նրա ամուսնութեան 25 ամեակի առիթով ներկայացրել մի արկղ՝ դօմինօով, խաղի թղթերով և շահմատով: Դօմինօն շինած է ոսկուց՝ զանազան թանկագին քարերով զարդարած. խաղաթղթերը պատրաստած են մետաքսից և նշանաւոր նկարիչների նկարներով. իսկ շահմաթն էլ շինած է ոսկուց և արծաթից:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 Յունվարի.—Հրատարակուած է մինիստրների խորհրդի հետևեալ որոշումը.—Թոյլ տալ Լեհաստան տեղափոխուած օտարհպատակ այն հրէաներին 1888 թուի համար վերցնել առաջնակարգ գիլդիական վկայական, որոնց անցեալ տարի տրուած է եղել, առանց սոյն կանոնը տարածելու այն հրէաների վերայ, որոնց մերժուած է եղել Ռուսիայում առևտուր անելու թոյլտուութիւնը և թոյլ տալ մինչև սոյն մայիսի 1-ը, վերոյիշեալ հրէաներին խնդրատուից լինել Ռուսիայում վաճառականութիւն անելու համար, նախազգուշացնելով, թէ ով որ մինչև որոշեալ ժամանակամիջոցը խնդրատուից չի լինիլ, պէտք է դադարեցնէ իւր առևտուրը Ռուսիայում և հեռանայ պետութեան սահմաններից մինչև 1889 թուի յունվարի 1-ը:

ՓԱՐԻԶ.—Լեսէպսը ընկաւ ձիուց և ոտը կոտրեց:

ՍՈՖԻԱ.—Բօլղարական կառավարչական սիւներից մին՝ Շեմակովը Ֆիլիպպօպօլում անցաւ ընդդիմադիրների կողմը, որ խիստ մեծ անհանգստութիւն առաջացրեց կառավարչական շրջաններում:

Կ. ՊՕԼԻՍ.—Թիւրքական փարչութիւններին կրկին խիստ պատուէրներ են տրուած բօլղարական գաղթականների վերայ հսկելու, որովհետև նրանց մէջ նորանոր դիտաւորութիւններ են առաջացել:

Նելիդօվ դեսպանը պատուիրել է Վուլկովիչին ասելու, որ թէև ինքն անձամբ ոչինչ չունի նրա դէմ, սակայն նրան ընդունել կարող չէ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 Յունվարի.—Ցարիցինից «Нов.»-ին հեռագրում են, որ Նոբելը կերօսինի գինը իջեցրել է պուդին 20 կոպէկ:

ՄՈՍԿՈՒԱ.—Գեներալ Սան-Մարտինօն մի հետևակ բրիգադով և լեռնային թնդանօթաձիգնե-

---

ջուայ նման պատրաստի ուտում էր, խմում, պատրաստի հագնվում. առաջուայ նման յաճախում էր կլուբ և օպերա, արհամարհանքեամբ նայում էր «ազատամիտ», «խաւարամիտ», «անգոյն» և այլն լրագրութեան վերայ, անխնայ «քննադատում» և ծաղրում էր մեր խեղճ «մրոտողներին», առաջուայ նման... մի խօսքով ամեն բանի և ամենքի վերայ նայում էր իւր «ոլիմպիական բարձրութիւնից»: Սակայն մի դէպք պատահեց, ինքն ըստ ինքեան մի «աննշան» դէպք, որ, ինչպէս ասում են, նրա քթին խփած դիպաւ: Ահա այդ դէպքը:—Ինչպէս եղաւ, ինչպէս չեղաւ, տանը խօսք ընկաւ, որ Արշակին պսակեն, որովհետև նա արդէն երեսուն տարուն մօտ էր: «Կը պսակենք, կնիկ կուզենք, խելքի կը գայ, մի գործի կը կպչի, տուն-տեղով կլինի ու էլ բանից բէխեր չի մանգալ», միմեանց հետ առանձնապէս այսպէս էին խորհրդակցում նրա ծնողները, որոնք երկար սպասելով արդէն հիասթափուել էին նրա «մենձ մարդ» դառնալու վերաբերութեամբ: Թէպէտ Արշակն երբէք մտադիր չէր ամուսնանալու և «ծանրաբեռնելու իրեն ընտանեկան անվերջ հոգսերով», բայց մի կողմից ծնողները, միւս կողմից «գիգիզեղաները», «մամիդաները» «դէդիդաները» և «ծալօները» այնքան «խնդրեցին», այնքան «աղաչեցին», որ վերջապէս նա «ստիպուած» էր համաձայնուելու: Շատ լաւ: Էլ ինչ ասել կուզէ, որ այդպիսի դէպքերում մօցիքրալ կանայք իրենց ճարպիկ կամ, ինչպէս ասում են, «օձն իւր բնից հանող» լեզուով արդէն պատրաստ կանգնած են ձեր դրանը: Սկսեցին խօսել, գովել, փառաբանել տղայի տանն՝ աղջկայ գեղեցկութիւնը, բարեմասնութիւնները, աղջկայ տանը՝ տղայի ընդունակութիւններն և խելքն ու շնորհքը... Բայց արի տես, որ այս իմ Արշակն ինչ աղջիկ էլ որ տեսնում էր, ոչ մէկին չէր հաւանում. մէկը տըգեղ էր, միւսն «անսիմպատիական» դէմք ունէր, երրորդը կարճահասակ էր, չորրորդը՝ բարձրահասակ, հինգերորդը շատ հաստ, և այլն... բայց որ ամենագլխաւորն էր՝ ոչ մէկը «մտաւոր ցենզ» չունէր, իսկ առանց «մտաւոր ցենզի» կինն ինչպէս պէտք է հասկանար «կեանքի» և «շրջապատող իրերի» վերայ ամուսնու ունեցած «հայեացքները», «գաղափարներն» և մասնակցէր դրանց, իբրև նրա հետ «հաւասար իրաւունքներ» ունեցող «լծակից»: Ո՛չ, նա ուզում էր գեղեցիկ, «սիմպատիական» և «մտաւոր ցենզ» ունեցող «կեանքի ընկեր» այդ «բառերի բուն նշանակութեամբ», իսկ փողի և բաժինքի վերայ նա... «այնքան էլ» ուշադրութիւն չէր դարձնում: Խեղճ ծնողները մնացել էին տարակուսած, իսկ մօցիքուլները խօ կատաղել էին: Շատ խնդրեցին, շատ պաղատեցին, որ վերջապէս մէկին բաւականացնի, բայց ասաց, որ իւր «իրաւասութիւնով» համ իւր անունն է կորցնում, համ աղջիկների «շնորհքը դուրս կարում», բայց չէ որ չէ,—Արշակս «նստել էր սատանի ձիուն և չէր վէր գալիս»: Նա ամեն անգամ և ամենքին մի վճռական պատասխան էր տալիս.—Մինչև աղջիկը չհաւանեմ, չեմ ուզիլ:—Լաւ, հմի դուն գիտաս,—վերջապէս ճարահատեալ ասացին ծնողներն ու մօցիքուլները և ձեռ քաշեցին մի կարճ ժամանակ: Յանկարծ—Արշակը տեսել էր մի աղջիկ և... հաւանել էր, ոչ թէ միայն հաւանել, այլ և ուղղակի սիրահարուել էր նրա վերայ: Այդ աղջիկն ունէր նրա ցանկացած համ գեղեցկութիւնը, համ «սիմպատիականութիւնը», համ «մտաւոր ցենզը», համ, որ ամենասարսափելին է, ունէր «փող»... սակայն, ասացի, որ այդ վերջին հանգամանքի վերայ նա... «այնքան էլ» ուշադրութիւն չէր դարձնում: Ուրեմն վճռուած էր, Արշակը պէտք է պսակուէր: Ծնողներն ուրախութիւնից ոտի վերայ չէին կանգնում: Ինչ խօսք, որ այդ ուրախութեանը մասնակցում էին և՝ «գիգիզեղա», «մամիդա», «դէդիդա» ու «ծալօ»-ները, դրանք էլ սխր իրենց հաշիւներն ունէին... Մօցիքուլը նորից մէջ ընկաւ:

Մութն էր: Ուստա Կարապետի տանը հաւաքուած էին մեծից մինչև փոքրը և առաջին անգամ սպասում էին, թէ մօցիքուլն ինչ լուր պէտք է բերի հաւանուած աղջկայ տնից: Սպասում էին և խօսում հարսանիքի մասին: Արշակն, ի հարկէ, այնտեղ էր, բայց ոչ ոք նրա պէս անհամբեր չէր սպասում մօցիքուլին: Վերջապէս եկաւ մօցիքուլը:

—Ի՞նչ խաբար, ինչ խաբար,—հարցրին ամենքը, բացի Արշակից:

Մօցիքուլը նախ քան պատասխանելը, նստեց թախտի վերայ, մի տեսակ բարկացած հայեացքով նայեց ուղղակի Արշակի աչքերին և, վերջապէս, ասաց.

—Աղջիկը քեզ չի հաւանում:

—Ի՞նչ,—գոռաց հայրը:

—Ի՞նչ,—կանչեց մայրը:

—Բա՛,—միաբերան արտասանեցին «գիգիզեղան», մամիդան», «դէդիդան» ու «ծալօն» և ձեռքերը բռունցք կազմելով զարկեցին ներքին շրթունքների վերայ:

Երկաթագործ «ոզէս» և «սխմախ» եղբայրը բարձրաձայն ծիծաղեց:

Իսկ Արշակը:—Արշակ Սանթուրեանս մնաց լուռ...

—Ուրիշ ոչինչ,—գուցէ հարցնէ ընթերցողը:

—Այո, ուրիշ ոչինչ:

Նոր-Դար

բով շարժուեց դէպի Սաստի՝ մինչեւ Հարէշեան սահմանը։ Թշնամին երեւաց Գանդայի մօտ, Սաստիից հարաւ։

ՎԵՆՆԱ, 22 Յունվարի.—«Correspondence de L'est»-ում հրատարակուած է Բերլինից մի նամակ, ինչպէս հաւատացնում է խմբագրութիւնը, բոլորովին դիպլօմատիկական հեղինակութիւն ունեցող աղբիւրից։ Այդ նամակի մէջ հաղորդուած է, որ Գերմանիան իւր բոլոր ջանքը գործ է դնում Բուլղարիայի վերաբերմամբ, Վեննայի եւ Պետերբուրգի մէջ եղած տարաձայնութիւններն հարթելու համար. —Բերլինի կաբինէն տեղեկացրեց Աւստրիա-ունգարական կառավարութեան ուղղակի եւ հաստատապէս, որ նա Բուլղարիան համարում է այնպիսի մի երկիր, որ չէ մըտնում Աւստրիա-Ունգարիայի ազդեցութեան շրջանի մէջ եւ թէ Աւստրիան, փոխանակ Ռուսիայի հետ համաձայնութիւն կայացնելու, մըտածում է Բուլղարիայի պատճառով զէնքի դիմելու։ Բերլինի կաբինէի կարծիքով, Բուլղարիան Աւստրիա-Ունգարիայի համար էական շահ չէ կազմում։ Միւս կողմից էլ Բերլինի կաբինէն իմացրեց Պետերբուրգում, որ նա պէտք պաշտպանէ Աւստրիա-ունգարական շահերը Բօսնիայում եւ Հերցոգովինիայում։ Այսպիսի պայմանների մէջ միակ ամենայարմար միջոց են կազմում բանագնացութիւններն, որոնք ընդունվում են եւ Վեննայում եւ Պետերբուրգում։ Նախ մըտադիր էին կոնֆերէնցիա կազմելու. բայց յետոյ այդ մտքից հրաժարուեցան՝ վախենալով, որ միգուցէ Ռուսիան Բօսնիայի խնդիրը յարուցանէ։ Հետեւաբար բաց է մնում անմիջական բանագնացութիւնների եւ լաւելեայն զիջումների ճանապարհը։ Գերմանիան կամենում է մասնաւորել խնդիրը եւ խորհուրդ է տալիս Աւստրիա-Ունգարիային, որքան հնարաւոր է, զիջանել եւ եթէ այդ զիջումը ոչինչ հետեւանքի չհասցնէ՝ զօրաբանակը պատերազմական դրութեան մէջ դնել։

ՊԱՐԻԶ.—«National»-ը հաղորդում է, որ երէկ Ֆլօկէին ներկայացրին բարօն Մօրէնհէյմին եւ Դօսբէմին՝ աւետարի մինիստրին։ Փետրվարի 13-ին բարօն Մօրէնհէյմը ներկայ կը լինի Ֆլօկէի մօտ՝ բանկէտին։ «Temps»-ը յիշելով այս լուրը, ասում է, թէ պէտք է սպասել, որ բարօն Մօրէնհէյմն աւելի պատուաւոր հրաւէր կը ստանայ՝ քան դիպլօմատիկական կորպուսի միւս անդամները։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Թիֆլիսի հրապարակի վերայ վաճառահանուող ապրանքների ընթացիկ գները Յունվարի 22—23 ին.

ՅՈՐԵՆ.—Դուռնուկի պուդը	1 — 5 կ.	
,, Գանձակի ,,	1 — — ,,	
,, Շորագալի ,,	— 90 ,,	
,, Նախու ,,	1 — — ,,	
ԱԼԻՒՐ.—Դուռնուկի պուդը	1 — 40 ,,	
,, Գանձակի ,,	1 — 20 ,,	
,, Շորագալի ,,	1 — 30 ,,	
,, Խառն տեսակները	1 — 20 ,,	
ԳԱՐԻ.—Սպիտակը	— 60 ,,	
,, Սեւը	— 65 ,,	
ԲՐԻՆՁ.—Աքուլայ	2 ր. 40—50 ,,	
,, Նախու	1 — 75 ,,	
,, Խառն տեսակները	1 ր. — 65 ,,	
ԱՂ.—Ռուսիայի	35 ,,	
,, Կողբի	65 ,,	
,, Կաղզուանի (գոյնը)	40 - 45 ,,	
,, Կաղզուանի (կտոր)	չկայ	
,, Բագուի ,,	22 ,,	
ԽԻՂ.—Օդեսայի	10 ր. — ,,	
,, Նիժեգօրօդի	10 — 50 ,,	
ՄԱՔՈՒՐ ԿԱՐԱԳ	9 50—9 ր. — ,,	

ՁԷԹ.—Տիֆլիսեան	8 — 20 ,,
,, Նախու	չկայ
,, Գէօկչայի	3 — 90 ,,
,, Զէյթունալի	11 — — ,,
ՃՐԱԳՒՌ.—Չհալած	2 — 40 ,,
,, Հալած	4 — — ,,
ՆԱՒԹ.—Զան. գործարաններից	— — ,,
,, Նոյեմբերին	
,, կայարանում	85—90 ,,
,, Քաղաքում	95—1ր ,,
ՄՈՄ.—Կրասօվնիկօվի	9 — 35 ,,
,, Օդեսայի	8 — 50 ,,
Տօլէի գործ. 4—5-նոց 9 ր. 6—8-նոց	10—40 ,,
ՍԱՊՈՆ.—Տօլ. գոր. 1 տես.	3 — 80 ,,
,, ,, 2 ,,	2 — 50 ,,
,, ,, 3 ,,	2 — — ,,
,, ,, Մարմարեանի	2 — 60 ,,
,, ,, 1 եւ կէս ֆ-անոց	3 — 20 ,,
ԼՈՒՑԿԻ (ողէչկա) Օսիպովի,	
,, Խաչէկի	4—3—80 ,,
,, Վոլկով	3 — 80 ,,
,, Կարմիր 300-անոց ,, չկայ	
,, Օդեսայի	— — — ,,
,, Կարբինեանի	,, 45—50 — ,,
,, Ավետի-չկա ե 55 հաշէկը	
ՇԱՔԱՐ.—Բրոդսկի	6 — —
,, Գնիլյան մեծագլուխ	5 ր. — 90 ,,
,, ,, մանրագլուխ 6 ր.	30 — ,,
,, Չերկասկի	5 — 90 ,,
,, Կոտրած	6 — — ,,
ՇԱՔԱՐԱՒԱԶ.—Օդեսայի	5 ր. 10—15 ,,
ԿԱՐԱՄԵԼ.—Շապօշնիկովի	
,, Ժեստի արկղում	7 — 60 ,,
,, ,, փայտի արկղում	5 — 80 ,,
,, Պոլեակովի	
,, Ժեստի արկղ.	7 — 50 ,,
,, ,, փայտի արկղ.	5 — 70 ,,
ՄԱԿԱՐՕՆ.—Օդեսայի	4 — 60 ,,
,, Սամարայի	4 — 60 ,,
ԿՕՖԷ—Մօքքօ	28 — — ,,
,, Երկրորդ տեսակ	27 — — ,,
,, Րիօ	24 — — ,,
ԿԻՆԱՄՕՆ (գաւչին)	12 — — ,,
ՊՂՊՂ.—Սինգափօրի	22 ր. 50—23 — ,,
ԿՈՃԱՊՂՊԵՂ (կոտ) Սպիտակը	16 — 20 ,,
,, Մոխրագոյնը	10 — 20 ,,
,, Դեղինը	4 — 80 ,,
ՊԱՂԼԵՂ (չէր)	2 — — ,,
ԱՐՋԱՍՊ (զաղ)	1 — 20 ,,
ԾԾՈՒՄԲ (քուքուրթ)	2 — 70 ,,
ԽՈՒՆԿ.—Սպիտակը	15 — — ,,
,, Սեւը	8 — 80 ,,
ԿԼԱՅԵԿ	32 ր. 33 — ,, տակառ
ՕՇԻՆԴՐ (նշադրի)	9 ր. 50 ,, տակառ
ՑԻՆԿ (լիստովոյ)	— — ,,
ՊՈՂՊԱՏ.—Անգլ.	25 — ր.
ՍՊԻՏԱԿ ԹԻԹԵՂ (ժեստ)	17 ր. տակառ
	Սակառ,
ՉԱՄԻՉ (Աստրա) բաւակենը	2 — 90 ,,
,, Անգուլկենը	3 — 10 ,,
ՆՈՒՇԸ	14 — 80 ,,
ԿԱՂԻՆԸ (տոխ)	4 — 45 ,,
ՇԱԳԱՆԱԿ	1 70 — 35 ,,
ԸՆԿՈՅԶ	1 — 40 ,,
ՕՂԻՆ. Աստրաս տակառի	— ,,
ԱՊԻՐՏԸ.—Տակառով	— ,,
ՄՈՐԹ.—Այծերի (Մար. համար) զոյգը	90 ,,
,, (Օդես. համար 1 ր.	1 — 10 կ.
Ոչխարը չափազանց թանգ. պահանջ բըռնած չկայ.	
,, Այծի	1 — 50 ,,
,, ,, Ընտրովի	2 — 40 ,,
ՏԱՎԱՐԻ ԿԱՇԻՆ	7 — 50 ր.
,, Մարոկկի Տաճկաստանի	— — կ.
,, Շէյասն	— — ,,
ԲՈՒՐԴ.—Թուշի -ւիրայ	— — ,,
,, Գանձակի	— — ,,
,, Դաղստանի չկայ	
,, Շիրաք	— — ,,
,, Ղազախի	— — ,,
,, Նախու	— — ,,
,, Խորասանի	— — ,,
ԲԱՄԲԱԿ.—Երեւանի	
,, Ամերիկայի սերմից	10 — 10 — 50 ,,
,, Ղարաղօզա սերմից	8 — 80 — 60 ,,
ՄԱՆԱԽ	14—15 — ,,
ԲՈԺՈԺ.—Նախու չկայ	
,, Խիլքեթի	— — ,,
ԹԵԼ.—Կախեթի	— — ,,
ԼԱՍ (ֆլիզոն)	— — ,,
ԹԷՅ—Կ. եւ Ս. (К. и С.) Պոպով եղբայր	
Ամէն տեսակի համար զեղչ % 10	
ՍԽԱԽՈՏ.—Կաշնարեվի	
Պապերոս.	
1-ին եւ 2-րդ տեսակ զեղչ. 24% } պայմանով	
Թամբաքու 1-ին եւ 2-րդ տեսակի համար զեղչ % 18 կ.	
3-րդ տեսակի համար % 15 կ. } պայմանում	
Բոգդանովի	
ամէն տեսակի համար զեղչ % 20 կ.	
ԿԱՐԵՇԿԱ.—Ժուլիկի պուդը 8 ր.	— կ.

,, Բեժակալ ,,	7 ր. 20 ,,
,, Բեհապենկոյի ,,	9 ր. — ,,
ԽԱՂԱԹՈՒՂԹ Կարդա	5 ր. 50 ,,
ՍԱԿԻՆ.—Պոլյանդերեաս	9 ր. 60 ,,
,, Բաշախուլեան սպառուած	
,, Օսմանեան լիրան	10 ր. 45—50 ,,
ԱՐԾԱԹ—Բուլլիանոց	1 ր. 32—35 ,,
,, 20-կոպէկանոց	1 ր. 20—22 ,,
ԱՐԺԵՏՈՄՍԵՐ	
ԹԻՖԼԻՍԻ Ազնուակ. բանկի ակցիան	— 290 ր.
,, Քաղաքային ,, ,,	82 ր. 25 ,,
,, Ազնուականների կալուածական բանկի գրաւական տոմս	
(Закладной листъ) քուղ.	98 ր. — ,,
ՔՈՒԹԱՅԻՍԻ բանկի նոյն տոմսը քուղ.	98 ր.
Գիւղական	98 ր.
ՏՈՄՍԵՐ.—Պետական բանկի 5%	
1-ին շրջանի	98 ր. 50 կ.
2-րդ	98 ր. — ,,
3-րդ	97 ր. 40 ,,
4-րդ	98 ր. — ,,
5-րդ	98 ր. — ,,
Արեւել. փոխառութ. 5%	
1-ին ,,	98 ր. 50 կ.
2-րդ ,,	98 ր. — կ.
3-րդ ,,	98 ր. 40 կ.
Վիճակահանութեան 5%	
1-ին փոխառութ.	268 ր. — կ.
2-րդ	249 ր. 50 կ.

Խմբագիր-հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՕԿՕԼԱԴ

Ա. ՍԻՕՒ ԵՒ ԸՆԿ.

(M.) 50—13

ԽՍԿԱԿԱՆ Է ԳՈՐԾԱՐԱՆԻ ԱՅՍ ԴՐՈՇՄՈՎ, ՄԻԱՅՆ

Huste-Nicht

Gerichtl. geschützt

ՄԻ ՀԱԶԻՐ

Մեղրա-Բաւսեղէն-Մալց-Էկստրակտ եւ չարաբխլիկներ

Լ. Գ. ՊԻՇՏ ԵՒ ԸՆԿ. ԲՐԵՍԼԱՎՈՒՄ

Գինն է,—մի շիշը 1 ր. 25 կ. եւ 2 ր. 40 կ. չարաբխլիկները 30 եւ 50 կոպէկ։

Գլխաւոր պահեստ է Ռուսիայի համար՝ Պետերբուրգ, Վ. Աւրիխի մօտ, Բոլշ. Մորսկայա, № 17.

Վաճառվում է,—Թիֆլիսում, դեղատնային ապրանքների վաճառման կովկասեան ընկերութիւն, Վ. Գրինենի ճանապարհածախսը սաանձին

(M. 4852) 32—13

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Ա Ն Վ Տ Ա Ն Գ

ՇՎԵԴԱԿԱՆ ԼՈՒՑԿԻՆԵՐ

(ШВЕДСКІЯ СПИЧКИ)

Կատարելագործուած, ապահով բոցով, ամենաէժան գներով։ Մեծ քանակութեամբ առնողներին մեծ զիջումն է լինում։

ԳՈՐԾԱՐԱՆ **Գ. Բ. ՏԵՐ ԱՍԱՏՈՒՐՈՎ ԵՒ ԸՆԿ.**

ԹԻՖԼԻՍ. Վերայում.

50—21

Լոյս կը տեսնի 1888-ին առանձին գրքով

Գ. ՉՈՒԲԱՐԻ

ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐ

ՄԱՀՏԵՍԻ ՍԱՐԳԻՍ

ՄԻ ՎԱՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՓՃՐՈՒԱԾ ԿԵԱՆՔ

երկերը միասին։ Բաժանորդագինը 1 րուբլի է ընդամենը։ Բաժանորդ գրուել կարելի է միմիայն «Նոր-Դար»-ի խմբագրատանը։ Օտար քաղաքներից դիմում են «Նոր-Դար»-ի խմբագրութեանը այսպէս. Тифлисъ, въ редакцію ежедневной армянской газеты «Норъ-Даръ».

(խմ.) X—17

№ 75

ԽՍԿԱԿԱՆ ԳԱՆՁ Է

ինքնավիրաւորութեան եւ անբարոյականութեան զոհերի համար

ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ

ՀԵՂ. ԴՕԿՏՈՐ **ՌԵՏԱՈՒ**

Ռուսերէն հրատարակութիւնը երես 250, գինը 1 րուբլի.

Թող այս գիրքը կարդա ամէն ոք, որ վերայիշեալ ախտն ունի. նա շատերին փրկել է յայտնի կորուստից։

1 ր. արժողութեան փոստ. դրոշմ ուղարկելով P. F. Bierey's Verlags-Magasin-ին Լայպցիգ։ (Հասցէն. R. F. Bierey's Verlags-Magasin in Leipzig).

(M) 50—1

ԲԺԻՇԿ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԻՍԱՀԱԿԵԱՆՑԸ

Ընդունում է հիւանդներին առաւօտեան ժամը 9-ից մինչեւ 10-ը, երեկոյեան 4-ից մինչեւ 5-ը։

Բնակվում է Սոլոլակի Սուրբ-Աբրահամի փողոցի վերայ, տուն Բակրաձէ № 20.

X—47

1865 թ. 1882 թ.

ՍԱՎՎԱ ՄՕՐՕԶՕՎԻ ՈՐԴԻ ԵՒ ԸՆԿ.

ՆԻԿՕԼԵԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Պատիւ ունի պարգ. գնողներին տեղեկացնելու, որ 1888 թուի յունվարի 1-ից իւր վաճառականական պահեստը ԲԱԳՈՒ քաղաքում փոխ գետեղուել ԿՐԱՍԻԼՆԻԿՕՎԻ տունը, ծովափին (Նաբերեժնայա), ուր եւ խնդրվում է դիմել Ընկերութեան ապրանքների պահանջներով։

6—4

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Ուղիղ եւ կանոնաւոր երթեւեկութիւն Մարսէյլի եւ Բաթումի մէջ։

Հինգշաբթի, փետրվարի 4-ին, «ԳՕԼԼԻԱ» (La Gaule) շոգենաւը, նաւապետ «ԳԱՐՐԻԳ» (Garrigues) գալու կը գայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս եւ Մարսէյլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալութեան Բաթումում՝ պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ՌԵՆՈՒԻՆ, նախկին գալերէյա Արծրունիների № 103.

4—1

ՆԵՐԿԱՅ 1888 ԹՈՒԻՆ

Հրատարակվում է Կ. Պոլսում

„ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ“.

Պատկերազարդ հանդէսը, որ լոյս է տեսնում ամիսը ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ։ Բաժանորդագինն է ՉՈՐՍ ՌՈՒԲԼԻ։ Բաժանորդ գրուողների վերայ վճակ պիտի զգուի 40 բաժին նուէրներ (40 հատոր գիրք)։

Ռուսիայում բաժանորդ կարող են գրուել նաեւ ԱՐՇԱԿ ՄԵՀՐԱԲԵԱՆԻ մօտ, որի հասցէն է. Въ Шулаверы (черезъ Бѣлый Ключъ) Аршаку Меграбянъ.

ՏԷՐ ՏՆՕՐԷՆ ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

(փոխ.) 5—4

ՇԱՏ ՉԱՓԱՒՈՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԵԱՄԲ

Հայոց եւ ռուսաց լեզուներով, սովորեցնում եմ

ԿՐԿՆԱՏՈՒՄԱՐ ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՀԵՇՏ ԵՂԱՆԱԿՈՎ.

(Տարրական թուաբանութիւն իմացողներին սովորեցնում եմ միայն 4 ամսուայ ընթացքում)։

Ընդունում եմ նոյնպէս պատուէրներ չխառնուած հաշիւները պարզելու եւ նրանց կարգի դնելու։

Օտարաքաղաքացի ուսանողները կարող են, բստ ցանկութեան, եւ փոստով էլ իրենց տետրակներն ինձ ուղարկել մինչեւ ուսման ընթացքի աւարտումը։

Մանրամասնութիւնների համար տեղեկութիւն ստանալ ցանկացողը կարող է դիմել ինձ նամակով հետեւեալ հասցէով.

Тифлисъ М. Гуліеву, меблированные номера нов. дома Сараджева на Дворцовой ул.

20—11